

ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

*Բանասիրական գիրությունների դոկտոր, պրոֆեսոր,
հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ*

Մեր գրականության մեջ դասական հեքիաթի մշակման երկու ճանապարհ գոյություն ունի: Խոսքը թումանյանական և աղայանական ուղիների մասին է: Առաջինը շատ ավելի դժվարին ճանապարհ է, քան երկրորդը: Թումանյանը, որն իր լեզվամտածողությամբ ամենից մոտ է կանգնած ժողովրդական հոգեբանությանը, հեքիաթը մշակելիս համադրելով տարբերակները՝ խորացնում էր ժողովրդական հեքիաթի փիլիսոփայական ենթիմաստը, որը, անշուշտ, մեծ ճիգեր էր պահանջում գրողից: Երկրորդ դեպքում, որով ընթացել է Աղայանը, երևույթները դառնում էին ավելի որոշակի, հեղինակային միջամտությունները շատ էին, գրողը հստակ էր դարձնում ինչպես ժամանակը, այնպես էլ տարածությունը՝ դրանով իսկ խախտելով հեքիաթի ժանրի սահմանները: Բացի դրանից՝ հեքիաթում ներմուծում է հերոսների, որոնք պիտի կոփեին երեխաների հոգեբանությունը՝ հետագայում կյանքի դժվարություններին պատրաստ գտնվելու համար և այլն: Աղայանը հեքիաթում արծարծում էր սեփական գաղափարները և այլն:

Եթե առաջնորդվենք ըստ մեր գրականության պատմության մեջ ընդունված տեսակետի, ապա կարող ենք ասել, որ Խեչոյանը հետևել է հեքիաթի մշակման թումանյանական սկզբունքին, այն է՝ խորացնել ժողովրդական հեքիաթի փիլիսոփայական ենթիմաստը, այն դարձնել ավելի բյուրեղացած ու տեսանելի: Բայց այս հանգամանքն էլ Խեչոյանի հեքիաթների առանձնահատկությունը չի բացահայտում, եթե անգամ կարևորենք, թե ինչպես են սկսվում կամ ավարտվում դրանք: Մենք կարող ենք ընկնել թյուրիմացության մեջ՝ նրա գործերը տեղակայելով միայն ժողովրդական հեքիաթները մշակող հեղինակների շարքում: Մինչդեռ ամեն ստեղծագործող ունի սեփական ոճը, երևույթների բացահայտման սեփական փիլիսոփայությունը: Խոսքն այն գրողների մասին է, որոնք նոր աշխարհայացք են բերում և ոչ թե կրկնում են արդեն եղածը կամ աշխարհը բացելու արդեն նախկին ձևերը: Հետևաբար Խեչոյանի հեքիաթները չէին կարող լինել վեպեր գրելուց հետո հանկարծակի հայտնված երևույթ կամ

յուրատեսակ ժամանց: Դրանք աշխարհը, մարդուն հասկանալու լավագույն միջոցներ են, որ դուրս չէին մնա գրողական ոճի սահմաններից, և դա պայմանավորված էր ոչ միայն աշխարհընկալման փիլիսոփայությամբ, այլև երևույթների ընկալման կերպով: Այս իմաստով Խեչոյանի հեքիաթները տարբերվում են ոչ միայն անկախության շրջանում գրված տարաբնույթ հեքիաթներից, որոնցում չկա ժողովրդական լեզվամտածողության փիլիսոփայությունը հաղթահարելու խնդիր, այլ կա կյանքը հեքիաթային պայմանականություններով նկարագրելու միտում, այլև մեր գրականության մեջ արդեն դասական դարձած հեքիաթների մշակումներից, տվյալ դեպքում՝ Թումանյանի կամ Աղայանի հեքիաթներից: Ինքը՝ հեղինակը, խոսելով հեքիաթների բնույթի մասին, դրանք բաժանում է հրաշապատում (կախարդական), իրապատում (կենցաղային), էզոտերիկ և մետաֆիզիկական խմբերի¹: Գրողն իր հեքիաթները տեղադրում է երրորդ խմբում:

«էզոտերիկ մի և մետաֆիզիկայի հիմնական նպատակն է հնարավորինս խորությամբ հասնել իրերի և երևույթների հստակ ու անաղարտ ընկալմանը: Եվ իրականում խեչոյանական հեքիաթի մշակման սկզբունքը բխում է հենց էզոտերիկական խորաթափանց ներքնատեսության սկզբունքից: Այս հեքիաթները միտված են ներքին տարածքների բացահայտմանը՝ հեքիաթի արտաքին ձևի պահպանման սկզբունքով: Ժանրային, կառուցվածքային առումով սրանք հրաշապատում և իրապատում հեքիաթների ժանրային սինթեզի հիման վրա կառուցված հեքիաթներ են, և այդ է պատճառը, որ իրականությունը, որ ստեղծում է հեղինակը իր հեքիաթներում, ոչ միանշանակ իրական է, ոչ միանշանակ կախարդական. իրականի և կախարդականի սահմանազանց այդ վիճակը ստեղծում է մի նոր իրականություն, որտեղ իրականը նույնքան գերբնական է, որքան գերբնականը՝ իրական»²:

Այս ձևակերպումը բնութագրում է գրողի հեքիաթների յուրահատուկ բնույթը՝ առաջին հերթին դրանց արտաքին հատկանիշների հաշվառումով: Միանգամայն ճիշտ է, որ այդ աշխարհում «իրականը նույնքան գերբնական է,

1. Խեչոյան Լևոն, Տան պահապան հրեշտակը, Երևան, 2002, էջ 3:

2. Նվարդ Վարդանյան, Ալվարո Սեմիրոջյան-Բեքմեզյան, Նարինե Վարդանյան, Հայ ժողովրդական և գրական հեքիաթի հիմնախնդիրները, Երևան, 2015, էջ 102-103:

որքան գերբնականը՝ իրական»։ Բայց այս բնութագրումը կարող ենք վերագրել և շատ հեղինակների։ Բանն այն է, որ Խեչոյանի՝ հեքիաթի մշակման փիլիսոփայությունը տարբերվում է մեր դասական հեքիաթագիրների մշակումներից։

Թումանյանը գերազանցապես ռեալիստ է և հեքիաթները մշակելիս առավելապես գրում է իրապատում հեքիաթներ և դրա հիմնադիրն է մեր գրականության մեջ։ Աղայանը ռոմանտիկ է, որը մշակվող հեքիաթի մեջ ներմուծում է սեփական գաղափարները։ Բայց այս երկու մեծ հեքիաթագիրներն ընդհանուր են հեքիաթի մշակման ներքին փիլիսոփայական ուղղվածությամբ, որը նաև նրանց գրականության հիմքում է դրված։ Այդ սկզբունքը պայմանավորված է 19-րդ դարի գրականության ավանդներով՝ ինչ-որ բան պատմելու և դրա արդյունքում ինչ-որ բանի հասնելու տրամաբանությամբ։ Դրա լավագույն օրինակներ են Թումանյանի «Ուլիկը», «Ծիտը», «Կացին ախպեր», «Սուտասանը», «Չախչախ թագավորը», «Պոչատ աղվեսը», «Քաջ Նազարը», Աղայանի «Անահիտ», «Արեգնազան» գործերը։ Թումանյանի հեքիաթները հումորի անսպառ պաշարով են գրված։ Նրա և Աղայանի հեքիաթներն առանձնանում են հարուստ, հետաքրքիր գործողությամբ, ինչն ավարտվում է տրամաբանական վերջաբանով՝ չարի պարտությամբ ու բարու հաղթանակով։ Սա կարելի է ասել, որ մեր դասական հեքիաթագրության հիմնական բարոյափիլիսոփայական ձեռքբերումն է։ Այս տրամաբանության մեջ գործողությունը ծավալվում է ժամանակի մեջ։ Դեպքերի զարգացման արդյունքում մարդիկ հասնելու են լավ կյանքի, գալու են մարդկության լուսավոր օրերը։ Այլ կերպ՝ Թումանյանին, Աղայանին պատումի մեջ հետաքրքրում են դեպքերի ժամանակային ընթացքը։ Դրա մեջ ծավալվող դեպքերը կամ իրականությունը տարրալուծվում են հեքիաթում, դա լուսավոր աշխարհ է՝ հեքիաթային տրամադրությամբ։ Խեչոյանի պարագայում իրականությունը հեքիաթում վերածվում է սիմվոլի։ Բավական է համեմատել հեքիաթների վերնագրերը՝ այդ տարբերությունն ընկալելու համար։ Թումանյանի և Աղայանի հեքիաթների վերնագրերը խիստ որոշակի են, չկա գաղտնիք և ոչ էլ առավել ևս խորհուրդ, որ պիտի վերջում բացահայտվի։ Խեչոյանի համար կյանքում մշտապես գոյություն ունեցող երևույթ-առեղծվածներն են դառնում հետաքրքրության առարկա, և որոնք էլ ի վերջո վերածվում են խորհրդանիշների՝ «Աղվեսն ու դրախտի թակարդը», «Ճանապարհորդը», «Տան պահապան հրեշտակը», «Սև ճերմակ», «Հարևանի

սև կատուն», «Աներևույթ վիշապը» և այլն: Գրողը ներկայացնում է այնպիսի երևույթներ, որոնք ոչ անցյալի՝ հեքիաթային ժամանակների, և ոչ էլ ապագայում ստեղծվելիք կատարյալ աշխարհի մեջ ի հայտ եկող իրողություններ են լինելու: Խեչոյանը խոսում է արդեն սիմվոլ դարձած երևույթների մասին, որոնք դուրս են ժամանակից: Այս խորհրդանշանառեղծվածները մեր ներկայի, անցյալի ու ապագայի որակներն են: Դրանք մեր մեջ են: Հետևաբար գրողին հետաքրքրում է միանգամից ի հայտ եկող և սիմվոլի ձևով տրվող գաղափարը: Ժամանակային ծավալումները նրա համար երկրորդական են, կարևորը հեքիաթի տարածական ամբողջականությունը միանգամից ընկալելն է կամ հայացքի առջև ունենալը: Գրողի հեքիաթներն ավելի շուտ խորհրդապատկերներ են, քան պատմություններ լավ օրերի մասին: Դրանք ավանդական հեքիաթներին բնորոշ հարցեր չեն շոշափում կամ քիչ են շոշափում: Դրանցում եղած գաղափարները՝ որպես հավերժական ճշմարտություններ, հայտնության պես ու միանգամից տրվում են սիմվոլ-գաղափարի միջոցով և դառնում իրականության գաղտնիքների հերթական բացահայտումներ:

Խեչոյանի մշակումներն էական կառուցվածքային առանձնահատկություն ունեն, որը բնորոշ չէ հեքիաթի ժանրին: Դրանք չեն սկսվում «լինում է, չի լինում», «Ժուկով ժամանակով» արտահայտություններով: Միայն «Քարափի մեջ փակված աղջիկը» ունի «Լինում է, չի լինում» սկսվածքը, մեկն էլ («Մուրացկանը և հարուստը») սկսվում է հեքիաթին ոչ բնորոշ նախադասությամբ. «Մի հարուստ մարդ առավոտյան...»: Դրանցից ոչ մեկը չի ավարտվում «Երկնքից երեք խնձոր ընկավ» հայտնի արտահայտությամբ: Սա գրողի համար կարևոր նշանակություն ունի: Նման մոտեցումը հստակ նպատակ է հետապնդում: Գրողը ցանկանում է ասել՝ որքան էլ պայմանական միջավայր է ներկայացնում ինքը, այնուամենայնիվ ,դրանք իրողություններ են, դրանք հեքիաթներ չեն սովորական իմաստով: Այդ պատճառով էլ «Լինում է, չի լինում» նախադասությամբ հեքիաթը դառնում է ավելի ասացողի երևակայության արդյունք, քան թե «իրողություն»: Դրա համար էլ պետք չէ, որ պատմողը վերջում հիշատակի խնձորների մասին: Դրանք իրենց, առանձին դեպքերում ֆանտաստիկ բնույթով անգամ բացահայտում են իրականության այս կամ այն կողմը: Դրանք միայն ներկային չեն ուղղված, այլ նաև ապագային:

«Թագավորն ու ճգնավորը» հեքիաթում միմյանց են հակադրված հայեցողական մտածողություն ու կյանքի իրողությունների արդյունքում ձեռք բերած գործնական մտածողություն ունեցողները: Ջրաղացի խորհուրդն այն է, որ քարը ժողովուրդն է, աշխատավորը, որ բանում է, լցնում աշխարհը, ամբարը՝ պալատականներն ու իշխանները, եթե նրանք պետության հարստությունը չմեկտեղեն, «ժողովրդին չապրեցնեն ու իրենք չապրեն, այդ հարստությունով պատերազմներ չմղեն ու աշխարհներ չնվաճեն, հողին հատիկը աճեցնել չտան, ոչխարի հոտեր չունենան, եթե այս ամենը չլինի, ապա ժողովրդի աշխատանքը ջուրը կտանի»/43/:

Ճգնավորը հասկացավ, որ իմաստությանը միայն սովորելով չեն հասնում, այլ դրա մեջ թափանցելու համար սրտի մեջ ապրող խաղաղությանը լսելու զորություն պետք է ունենալ:

«Աներևույթ վիշապը» ևս ուղղված է նրանց, ովքեր պարտադրված են առաջ տանելու պետականության կայացման ընթացքը: «Եթե մի երկրի մեջ չի հարգվում ծերը, գիտնականն ու իմաստունը, կաշառակերության, խաբեության, աղքատության, վախի, բամբասանքի, առևանգումների տեսքով քաղաք է մտնում աներևույթ վիշապը և կուլ է տալիս բոլորին»/56/:

Հեքիաթներ կան, որոնք կառուցված են անեկդոտի հիմքի վրա: «Դատավորը» այդպիսի հեքիաթ է: Մարդկային ազահությունը սահման չի ճանաչում: Կախաղանի տակ կանգնած դատավորը չի խոստովանում, թե հացն ինքն է կերել, իսկ երբ տղան ոսկին բաժանում է երեք շեղջի, մեկը դատավորին, մյուսը՝ իր համար, իսկ երրորդը նրան, ով կերել էր հացը, դատավորը խոստովանում է, որ ինքն է կերել, և ոսկին իրեն է պատկանում: Դրանից հետո ոսկին դառնում է հող, իսկ տղան՝ աներևույթ հրեշտակ:

Առանձին դեպքերում էլ հեքիաթն արմատապես շեղվում է ժանրին ներկայացվող պահանջներից: Հեքիաթայինը ենթակա է դառնում հեղինակային մտահղացմանը: Խոսքով թագավորը հարուստներից հարուստ էր, չկար նրան հավասարը: Ենթադրելի էր, որ նա իր մարդկային որակներով ևս պիտի լիներ ամենաբարձրը, ամենահարուստը, որը բնորոշ էր լինելու հզոր, հարուստ թագավորին: Բայց նա չի կարողանում իր մեջ հաղթահարել նախանձն ու չարությունը լավ բարեկամի՝ Ֆահրադի հանդեպ: Նա նենգությամբ խլում է Ֆահրադից նրա սիրած աղջկան: Ֆահրադն ինքնասպանություն է գործում, բամբիշը, լսելով եղելության մասին, թույն է խմում:

Արքան էլ որսի գնալիս մթազնումների պահեր էր ունենում, կանգնում էր լեռների ու ձորերի դիմաց, ձայն էր տալիս. «Ֆահրադ, բամբիշ»: Աղաղակում էր, ճանկռոտում դեմքը: Ստացվում է, որ կարծեցյալ հաղթանակն իրականում պարտություն էր, դահիճն ու զոհը հայտնվում են գրեթե նույն հարթության վրա: Եթե մեկին մնում է խաբվածի դառնությունը, ապա մյուսին՝ կյանքի հարստությունը, հմայքը սեփական գործակցությամբ աղարտելու գործընթացը: Արքան մնում է կենդանի, բայց շաղված մտքով ու հարազատ մարդկանց կորուստը սգալով:

Ընդհանրացնենք: Խեչոյանի հեքիաթները մեծահասակներին են ուղղված ու թեև ժողովրդական հեքիաթների մշակումներ են, սակայն առանձնանում են հեղինակային հայացքի, գաղափարների ընդգծվածությամբ: Գրողին հետաքրքրում են այնպիսի երևույթներ, որոնք խորհրդանշական բնույթ ունեն և տրվում են միանգամից՝ որպես տեսքատի ամբողջականության հետևանք: Այդ սիմվոլները դառնում են մարդկային կյանքի առեղծվածային գաղտնիքների դրսևորումներ, հետևաբար և խորացնում են ժողովրդական հեքիաթներում արծարծված թեմաներն ու հարցադրումները: Հեղինակային հայացքի, նրա ոճի ինքնատիպության հետևանքով հաճախ առաջին պլան են գալիս այնպիսի հարցադրումներ, որոնք այնքան էլ բնորոշ չեն դասական հեքիաթներում արծարծված խնդիրներին: Հեղինակային գաղափարները, որոնք արտածվում են հեքիաթի հիմքից, որպես սիմվոլներ՝ դառնում են ներկայի անտրոհելի բաղադրիչը: Դրանք տարածվում են բոլոր ժամանակների վրա: Այս է պատճառը, որ գրողն իր հեքիաթներն անվանել է էզոտերիկական, որպեսզի մեկ անգամ ևս ընդգծի իր մշակումների յուրահատկությունը՝ բացահայտել անտեսանելին, առեղծվածայինը՝ իր նախնական, անաղարտ տեսքով: Մետաֆիզիկական երևույթները ժամանակի ներգործությանը չեն ենթարկվում, ժամանակին չեն ենթարկվում և Խեչոյանի հեքիաթներում արծարծված սիմվոլ-գաղափարները:

Բայց Խեչոյանի հեքիաթները նաև ժամանակակից մարդու և իրականության վերափոխման հնարավորությունների մասին պատմություններ են, որ իրենց մեջ հեքիաթայինից բացի ունեն այնպիսի շերտեր, որոնք հեքիաթային չեն: Ստացվում է, որ ֆանտաստիկականի և իրականի միահյուսման ճանապարհով ձևավորվում է գրական հեքիաթ, որ սինթեզում է տարբեր շերտերը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս գրողին հեքիաթին բնորոշ ֆանտաստիկական գործադրել այնտեղ, որտեղ թվում է, թե

դրա անհրաժեշտությունը չկա: Բայց Խեչոյանին գրավում են հենց այն իրողությունները, որոնք իրենց մեջ ունեն վերափոխման հնարավորություններ: Այս հանգամանքով է պայմանավորված և այն, որ հեքիաթի ժանրն իշխում է բոլոր ժամանակների վրա՝ և անցյալի, և՛ ներկայի, և՛ ապագայի: Առաջին հայացքից միայն կարող է թվալ, թե դրանք ավելի անցյալ ժամանակի սիմվոլներ են և կամ անցյալ ժամանակի փորձի դրսևորում. գրական այս հեքիաթները բոլոր հնարավոր ժամանակների մեջ ապրող երևույթներ են: Բայց դրանք բարու և չարի միջև եղած հավերժական պայքարի մասին չեն, որ երկրորդական են գրողի համար և հենց դրանով էլ տարբերվում են ավանդական հեքիաթներից, դրանք նաև գրական հեքիաթներ են, ուր կարևորված է գրողի հայացքը: Դա է պատճառը, որ այդ հեքիաթները հաճախ են հակադրվում «ընդունված կարծիքին», որ հերոսը կարող է և իր նպատակին չհասնել («Խոսրով թագավոր», «Աքաբ թագավոր»), որ կյանքը երբեք էլ ուրախ հարսանիքներով չի ավարտվում, դրանով միայն ամեն ինչ սկսվում է, իսկ վերջն այնքան էլ ոգևորիչ չէ, քանի որ ամեն մեկն ի վերջո հայտնվում է մենության թակարդում («Աղվեսն ու դրախտի թակարդը»), դրամները մոտացկանի պահեստարանում միայն ժանգոտում, դառնում են անպետք, այն պիտի լինի նրա գրպանում, ով այն կօգտագործի («Մուրացկանը և հարուստը»), մարդ իր սրտի մեջ ապրող խաղաղությունը լսելու զորություն պիտի ունենա («Թագավորն ու ճգնավորը»), եթե երկրում չի հարգվում ծերը, գիտնականն ու իմաստունը, կաշառակերության, խաբեության, աղքատության, վախի, բամբասանքի ու առևանգումների տեսքով քաղաք է մտնում աներևույթ վիշապը («Աներևույթ վիշապը»): Սրանք մեկ անգամ ևս վկայում են, որ Խեչոյանի հեքիաթներն իրենց վրա ընդգծված կարգով կրում են հեղինակային ես-ի ազդեցությունը, գրողի աշխարհայացքային ինչ-ինչ կողմեր:

Այս դեպքում գրողի մտահղացումը հնարավորություն է տալիս «հայրենիքի սահմանները ոչ միայն հորիզոնական տեսնել... այլ ուղղահայաց՝ ավելի հեռվին են հասցնում»:

Բանալի բառեր՝ էզոպերիզմ, հեքիաթ, երևակայություն, վերափոխում, ռեալիզմ, ռոմանտիզմ, հավերժություն, ֆանտաստիկա, ներգործություն, իրականություն:

FAIRY TALES BY LEVON KHECHOYAN

GRIGORYAN YACHAGAN

Doctor of Philology, Professor

The Head of the Chair of Armenian Language and Literature

Khechoyan 's fairy tales are intended for the adults and though they are developed by folk tales, they stand out for the author's own vision and ideas. The writer is interested in such phenomena that have symbolic character and are instilled at once as a result of the text integrity. These symbols become manifestations of mystical secrets of human life, and therefore deepen the topics and questions raised in folk tales.

Key words: *esoterics, fairy tale, imagination, modification, realism, romanticism, eternity, fantasy, impact, reality.*

СКАЗКИ ЛЕВОНА ХЕЧОЯНА

ГРИГОРЯН ВАЧАГАН

Доктор филологических наук, профессор,

Заведующий кафедрой армянского языка и литературы

Сказки Хечояна ориентированы на взрослых, они, будучи обработкой народных сказок, выделяются авторским взглядом, идеями. Автора интересуют явления, носящие символический характер и непосредственно являющиеся следствием целостности текста. Эти символы становятся проявлениями мистических тайн человеческой жизни, и поэтому углубляют темы и вопросы, поднятые народной сказкой.

Ключевые слова: *эзотерика, сказка, воображение, преобразование, реализм, романтизм, вечность, фантастика, воздействие, реальность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.03.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 12.04.2019թ.: